ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ ՊԱՐՈՆ ՆԱԳՈՒԾ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Երևան

Նոր տարվա սեմին Ձեզ ենք ներկայացնում Մեր շնորհավորանքը և սրտագին մաղթանքը, որ աշխարհում խաղաղություն լինի և ժողովուրդների միջև՝ բարի կամեցողություն ընկերային և ազգային արդարության պայմաններում, և մեր վերածնված մայր երկիրը շարունակի իր վերակառուցման ու զարգացման ընթացքը Սովետական մեծ Միության ժողովուրդների եղբայրական ընտանիքում:

Ամենայն հարգանքով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ ՊԱՐՈՆ ԲԱԴԱԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Երևան

Հանուն հայ հավատացյալ ժողովրդի, որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, հաճելի է մեզ շնորհավորել Ձեր Նոր տարին՝ մաղթելով աշխարհիս խաղաղություն և մեր մայր հայրենիքին՝ տնտեսական, գիտական ու հոգևոր-մշակութային վերելք՝ ի խնդիր հայ ժողովրդի բոլոր ազնիվ իղձերի կենսագործման;

Մաղթում ենք նաև քաջառողջություն և շինարար, հայրենանվեր գործունեություն Ձեզ և մեր հայրենի կառավարության բոլոր հարգարժան անդամներին:

Խորին հարգանքներով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ՍԱՐԳԻՍ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Երևան

Մեր եկեղեցու և Մայր Աթոռ ս. Էջմիածնի անունից Ամանորի առթիվ ընդունեցեք Մեր և Մեր բոլոր գործակիցների հարգալից, բարի մաղթանքները Ձեր և Խորհրդիդ հարգարժան անդամների արևշատության և հայրենաշեն գործերի հաջողության համար:

Ամենայն Հայոց Հայրապետը և Իր բոլոր հավատարիմ գործակիցները կշարունակեն նաև հետ այսու խոսքով ու գործերով սրտեռանդն աշխատել ի խնդիր Հայաստանյայց եկեղեցու միության և համայն հայ ժողովրդի միասնության ամրապնդման, ինչպես և աշխարհի խաղաղության:

Շնորհավոր Նոր տարի:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Էջմիածին

Ընդունեցեք իմ ջերմ շնորհավորանքներն ու բարեմաղթությունները Նոր տարվա առթիվ: Թող 1972-ը խաղաղ ու բարեբեր լինի մեր մեծ հայրենիքի և ամբողջ աշխարհի համար:

Շնորհակալություն Ձեր սրտագին խոսքերի համար:

Խորին հարգանքով՝

ՆԱԳՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

*
* *

Հաճեցեք ընդունել մեր շնորհավորանքները և լավագույն ցանկությունները Նոր տարվա առթիվ:

ԲԱԴԱԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

*
* *

Ձերդ Սրբություն,

Հաճեցեք ընդունել հայ եկեղեցու գործերի խորհրդի և անձամբ իմ ջերմ շնորհավորանքները Նոր տարվա առթիվ:

Կամենում եմ Ձեզ քաջառողջություն, բարօրություն և նոր հաջողություններ խաղաղության և ժողովուրդների բարեկամության ամրապնդման ազնիվ գործում:

ՍԱՐԳԻՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ